



ԿԵՍԱՐԱՅԻ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՊԱՏՐԻԱՐԺ

(1611 — 1612)

Կեսարացին այս անգամ «արժանական հրամանաւ» յաղթական մուտք կը գործէ Կ. Պոլիս, 1611 ին, երրորդ անգամ իբր պատարիարք:

1611 ին իր պատրիարքական աթոռի վրայ գտնուիլը ամէն տարակոյսէ դուրս է, վասնզի այդ թուականին Ասլան դպիր, հաւանօրէն աշակերտ կամ հետեորդ մը Գրիգոր Կեսարացիի, «ի խնորոյ» Յակոբ Քէօթահիացի եպիսկոպոսին կանոնագիրք մը կը գրէ ի Կ. Պոլիս «առոս Գրիգոր Կեսարացի պատրիարքի» (Բէշմէշ. Բ. 351):

Նոյն տարին կուգայ Երուսաղէմէն զինքըն գտնալ Մովսէս Տաթևացի, գառնալով «առ վարդապետն իւր Գրիգոր Կեսարացի, որ էր ի Կ. Պոլիս, քանզի քաղաքական հրամանաւ նստալ էր առաջնորդ քաղաքին՝ պատրիարք անուանը»:

Գրիգոր Կեսարացի, իր պատրիարքական պաշտօնավարութեան ընթացքին, տնոր կուտայ 1612 ին գաւազանի իշխանունութիւն, որուն ստացումէն յետոյ Մովսէս Տաթևացի կրկին կ'երթայ Երուսաղէմ